ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<17>> սեպտեմբեր 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 2481-1-Ա

վարչական ակտը անվավեր ճանաչելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Ալեքսանդր Մնացականի Եսայանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 09.08.2021թ. կազմված թիվ 33092/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Ալեքսանդր Մնացականի Եսայանի (ՀՎՀՀ՝ 40049544, ՀԾՀ՝ 2910740293, հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորք փ., 65 տ.) չկատարված հարկային պարտավորությունը 09.08.2021թ. դրությամբ կազմել է 545.856 դրամ, որից հարկ՝ 522.650 դրամ, տույժ՝ 23.206 դրամ, որը հաշվարկվել է ֆիզիկական անձի կողմից 2020թ. գույքի օտարման գործարքի իրականացման արդյունքում՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 150-րդ հոդվածի 10-ին մասով և 401-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վերոնշյալ պարտավորությունը գանձելու վերաբերյալ 10.09.2021թ. կայացվել է թիվ 2481-Ա որոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախքան թիվ 2481-Ա որոշման կայացումը ֆիզիկական անձ Ալեքսանդր Մնացականի Եսայանի կողմից ներկայացվել է եկամտային հարկի և սոցիալական վճարի 2020թ. տարեկան հաշվարկ, ուստի առկա են բավարար հիմքեր 33092/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության հիման վրա կայացված թիվ 2481-Ա որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 65-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

Ֆիզիկական անձ Ալեքսանդր Մնացականի Եսայանի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 10.09.2021թ. կայացված թիվ 2481-Ա որոշումը ճանաչել անվավեր:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Կատարող՝
Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Լուսինե Ջաղացպանյան
հեռ.՝ 011-549-191 (9168)